Արձանագրություն N1

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ կարիքների համար **ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26** ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստի

«30» մարտի 2026թ. 14:30

ք. Գյումրի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հովսեփ Սիմոնյան–Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Դմիտրի Մանվելյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (ԳՊ/ԳԱ)
Վարդան Զարիֆյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)
Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (ԳՊ/ԲԱ)
Դավիթ Հարությունյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար(ԳՊ/ԲԱ)
-ինքնաբացարկ

Գնումների համակարգող՝

Անի Ավդալյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. **Տեղեկություն ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հայտերի բացման մասին.**

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 15-երորդ օրվա 15:00-ին,որը համընկել է հայտերը նեկայացնելու վերջնաժամկետին :

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ

2. **Տեղեկություն ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի գնման առարկայի նախահաշվային գնի վերաբերյալ.**

Հ/Հ	**Ծառայության անվանում**	Չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը
1.	Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի (Տրդատ Ճարտարապետ փողոցից Մինաս Ավետիսյան) փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ	**9 000 000**

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ

3. **Տեղեկություն ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի մասնակիցների անվանումների ու հասցեների վերաբերյալ.**

Կազմակերպություն	ՀՎՀՀ	Էլ. Հասցե.	Հասցե
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	08417251	info@haldi.am	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	00813453	Lilit.poghosyan@dorproject.am	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բն 375040
«ՄԱԼԿ» ՍՊԸ	05549897	malkgroup@yahoo.com	ք. Գյումրի Տիգրան Մեծի 1
«Արք .Պրոեկտ » ՍՊԸ	05550895	archprojects.llc@gmail.com	ՀՀ ՇՄ Գյումրի Եպիսկոպոս Սմբատյան 4

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ

4. **Տեղեկատվություն գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ՝**

ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը վերոնշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում, բացառությամբ հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Հարությունյանի, որը հանդիսանում է «Արք .Պրոեկտ » ՍՊԸ-ի տնօրենի հորեղբայրը, ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, **Դավիթ Հարությունյանը հայտարարում է ինքնաբացարկ և չի մասնակցելու մրցույթի գնահատման գործընթացին**:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ

5. **Էլեկտրոնային ձևով հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին՝**

- «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերի պահանջներին համապատասխան. մասնավորապես՝ մասնակիցը ներկայացրել է գործունեության 01 դասի լիցենզիան և 01 դասի 05,09,08 ներդիրներով հավաստագրված մասնագիտությամբ մեկական աշխատակիցներ՝ հիմնական ցանկից, ինչպես նաև հրավերով պահանջվել է մեկ նմանատիպ պայմանագիր «ՄԱԼԿ» ՍՊԸ-ն տրամադրել է 3 նմանատիպ:
- «Արք .Պրոեկտ» ՍՊԸ-ն ներկայացրել է գործունեության 01 դասի լիցենզիան իսկ 01 դասի 05,09,08 ներդիրներով հավաստագրված մասնագիտությամբ հիմնական աշխատակցիներից հրավերի պահանջներին բավարարում է միայն «Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ»-ի մասնագիությամբ ներկայացված ներդիրին համապաստախանող աշխատակիցը, իսկ 05 և 08 համարներով ներդիրները չեն համարվում 01 դասի լիցենզիայի մաս, ուստի այդ ներդիրներով հավաստագրված աշխատակիցները չեն համարվում հրավերի պահանջների բավարարող, ինչպես նաև հրավերով պահանջվել է մեկ նմանատիպ պայմանագիր, մասնակիցը ներկայացարել է մեկը:
- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն ներկայացրել է 01 դասի լիցենզիան և 01 դասի 09 ներդիրով 2 աշխատակից, սակայն չի կցել հիմնական աշխատակազմից 05 և 08 ներդիրներով հավաստագրված աշխատակիցների փաստաթղթերը , ինչպես նաև հրավերով պահանջվել է մեկ նմանատիպ պայմանագիր, մասնակիցը ներկայացարել է մեկը:

- «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն ներկայացրել է 01 դասի լիցենզիան ,01 դասի 09 ներդիրով 2 աշխատակից, 05 ներդիրով՝ 1 աշխատակից, սակայն 08 ներդիրով հավաստագրված աշխատակիցը 01 դասի լիցենզիային չի համապատասխանում, այն համարվում է 03 դասի լիցենզիայի ներդիր , ինչպես նաև հրավերով պահանջվել է մեկ նմանատիպ պայմանագիր, մասնակիցը ներկայացարել է մեկը:

  Մասնակիցների կողմից ներկայացված լրացուցիչ աշխատակզմի մասին մանրամասն տեղեկատվությունը կամփոփվի գնահատման նիստի արձանագրությամբ:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ

6. **Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**:

   «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում առկա չեն հիմնական աշխատակազմից 05 և 08 ներդիրներով հավաստագրված աշխատակիցների փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

7. **Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմանների համապատասխան կազմված լինելու մասին:**

   Հրավերի պահանջներին չի համապաստախանել «Արք .Պրոեկտ» ՍՊԸ-ի, «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, առավել մանրամասն ներկայացված է 5-երորդ կետով :

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

8. **Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գների վերաբերյալ**

Մասնակցի ներկայացրած գնային առաջարկում թվաբանական անճշտություններ չեն եղել:

Մասնակից	**Չափաբաժնի անվանում**	**Գին առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Գումար**
«Արք .Պրոեկտ » ՍՊԸ	Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի (Տրդատ Ճարտարապետ փողոցից Մինաս Ավետիսյան) փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ	2 400 000 (Երկու միլիոն չորս հարյուր հազար)	-	2 400 000 Երկու միլիոն չորս հարյուր հազար)
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ		3 915 000 (Երեք միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար)	783 000 (յոթ հարյուր ութսուներեք հազար)	4 698 000 (չորս միլիոն վեց հարյուր իննսունութ հազար)
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ		5 800 000 (Հինգ միլիոն ութ հարյուր հազար)	1 160 000 (Մեկ միլիոն հարյուր վաթսուն հազար)	6 960 000 (Վեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար)
«ՄԱԼԿ» ՍՊԸ		6 000 000 (Վեց միլիոն)	1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար)	7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար)

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

9. **Տեղեկատվություն՝ գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների մասին՝**
Հրավերով նախատեսված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

10. **Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ ու պատասխանները իրականացվել են armeps.am համակարգով:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

11. **Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացված ծառայության ամբողջական նկարագրի մասին:**
Մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ծառայության ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին կամփոփվի գնահատման նիստի արձանագրությամբ:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

1. **Հանձնաժողովը որոշեց**

12.1 **ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին՝ մասնավորապես «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին, «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին, «Արք .Պրոեկտ » ՍՊԸ-ին հրավերի 8.9 կետի համաձայն՝ այն է «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը», տրամադրել շտկման 1 օր (քանի որ **հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան**) առ 31.03.2026 թվականը ժամը 18:00-ն համապատասխանաբար՝

- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին 01 դասի 05 և 08 ներդիրներով մեկական աշխատակից ներկայացնելու համար:
- «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին 01 դասի 08 ներդիրով 1 աշխատակից ներկայացնելու համար
- «Արք .Պրոեկտ » ՍՊԸ-ին 01 դասի 05 և 08 ներդիրներով մեկական աշխատակից ներկայացնելու համար:
Հավելյալ աշխատակից ներկայացնելու դեպքում այն **չի ներառվելու որպես լրացուցիչ անձնակազմ** և **չի գնահատվելու լրացուցիչ միավորներով**: Հիմք կընդունվի միայն մասնակիցների կողմից չներկայացված փաստաթղթերը և սխալ ներկայացրացի շտկումները:

Ընդունվել է որոշում 4 կողմ, 1 ինքնաբացարկ:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամներ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հովսեփ Սիմոնյան (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԳԱ)

Ինքնաբացարկ Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԲԱ)

Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Ավդալյան